

A GOOD
ADVERTISING
MEDIUM

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ
THE CITIZEN

THE ONLY
ARMENIAN
PAPER
Published in
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 3.

ՖԲԵՉՆՕ, ՔԱԼ. ՇԱՐԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 30, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

—Մարգարեան Ընկերութիւնը նոր գործիք մը շինել տուած է՝ այս տարի իր գործարանին մէջ գործածելու համար, այս գործիքի միջոցաւ օրը 30 թօնոյի չափ թուղ կարելի պիտի ըլլայ թաթախել ազով ու ստապով պատրաստուած ջուրի մէջ՝ պտուղը թթուելու վտանգէն ազատ պահելու համար:

—Ճօրճ Բօտինկ որ Ֆրէզնոյի մէջ Իզմիրի թուղ յառաջ բերող և զայն տարածող միակ անձն եղած է, և որուն համար կրտսի թէ սակէ վերջ աւելի մեծ քանակութեամբ՝ արեւելք պիտի զրկէ այս արեւելեան պտուղէն, այժմ մտադիր է թարմ թուղ ալ հասցնել հոն Վէլը Ֆարփօ ընկերութեան միջոցաւ: Այս վերջինս խոտապած է ամէն ջանք ընել այդ պտուղները ապահովապէս արեւելեան շուկան հասնելու համար, և եթէ յաջողի, Ֆրէզնոյի համար գործի նոր ու շահաւէտ ճիւղ մ'ալ կ'աւելնայ:

—Իզմիրէ եկած նամակ մը կրտէ թէ այս տարուան Սուլթանայ չամիչները քիչ մը աւելի առատ են թէև, բայց շուկան թէ հոն, թէ՛ Եւրոպայ և թէ՛ Ամերիկայ բոլորովին թափուր ըլլալուն՝ այդ առատութիւնը գներուն վրայ ո՛րքէն ազդեցութիւն մը չի պիտի կրնայ ընել: Իսկ թուղերը շատ քիչ են եղեր այս տարի՝ Մայիսի ցուրտ օգերուն պատճառաւ, անանկ որ այս տարուան բերքը անցեալ տարուան բերքին կէսէն պակաս կը հաշուի. և այս մին է այն պատճառներէն որք Քալիֆորնիոյ թուղի գինը բարձրացուցած են հիմայ:

—Սիտինկ Մըլին այն մեքենային անունն է որով չամիչին կուտերը կը հանեն մեծ զիւրութեամբ: Այս մեքենան հնարուելէն իվեր Ֆրէզնոյի չամիչը աւելի մեծ ապարէզ գտաւ: Կրտուի թէ հոսի չէ այն այն օրը երբ ասկէ զրկուած չամիչներուն մեծագոյն մասը այդ մեքենայէն պիտի անցնին՝ ճամբայ ելնելէ առաջ: Չամիչի մեծ ընկերութեանց մէջ երկար ատենէ իվեր դատ մը կար սա մեքենան գործածելու իրաւունքի մասին, Անցեալ տարի սառնք կերպով մը խնդիրը կարգադրած էին իրենց մէջ, բայց հիմա նորէն դժուարութեանց հանդիպած են ու խնդիրը նորէն դատարան ելած է: Ներկայ դատը Քանապիտէյթը և Փսիֆիք Ընկերութիւններու միջև է և կը տեսնուի Այստահոյ Նահանգի բարձրագոյն դատարանին առջև:

—Հրանդ Մելքոնեան անցեալ Կիրակի օր քաղաքը եկաւ, գրէթէ բոլորովին ապաքինած:

—Յարութիւն Ռատիկեան Սան Ֆրանսիսկոյէն վերադարձաւ՝ շատ գոհացուցիչ վիճակի մը մէջ:

—Գատաւոր Օսթըն շաբթուա մէջ իր վճիռը տըռաւ: Ֆրէզնոյի նոր կանոնագրութեան 250րդ յօդուածի մասին: Ընթերցողք գիտեն թէ այս յօդուած կարգիլէր քաղաքիս կարգեալ պաշտօնէից գործնական գեր մը ստանալ նախնական ընտրութեանց մէջ: Խմբագիր Բալլ այս օրէնքը անտես ըրած էր անցեալները, և Քաղաքապետի կողմէ դադարուած էր պաշտօնէն: Բալլ յիշեալ օրէնքը Սահմանագրութեան հակառակ նկատելով դատարանի դիմած էր՝ սա վտահուութեամբ թէ այդ յօդուած չեղեալ պիտի նկատուէր առանց որ և է կասկածի: Գատաւոր Օսթըն իր վճիռն մէջ կրտէ ի մէջ այլոց թէ քուէ տալու իրաւունքը՝ սահմանագրութեան մէկ տառնձնաշնորհումը ըլլալով՝ ուրիշ ո՛րք է օրէնք չէր կրնար քաղաքացի մը զրկել այդ իրաւունքէն: Գատաւորին վճիռը Նահանգային գերագոյն ատենին պիտի ներկայացուի՝ խնդիրը վերջնականապէս փակուելու համար, եւ տարակոյս չի կայ թէ գերագոյն ատենը պիտի հաստատէ Գատաւոր Օսթընի որոշումը այս մասին:

—Տիկին Գայիսնէ Նշիկեան Սան Ֆրանսիսկոյէ վերադարձաւ:

—Չմերուկի Հայ վաճառականներէ երկուքը՝ Յակոբ Անուշեան և Յովակիմ Վարդանեան վերագործան Սան Ֆրանսիսկոյէ: Կրտուի թէ սառնք այս տարի յաջող ու գոհացուցիչ գործ ունեցած են Քալիֆորնիոյ սառանին մէջ:

—Ա. Քըթնըր, քաղաքիս Քըթնըր —Կոլարսթին ընկերութեան հիմնադիրը անցեալ Երեքշաբթի օր մեռաւ Սան Ֆրանսիսկոյի մէջ: Հինգշաբթի թաղման օրը քաղաքիս խանութներէն շատեր գոյ միացին ի պատիւ ծերունի վաճառականին:

ԱԶԳԱՑԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Յառաջիկայ Կիրակի, 31 Օգոստոս, Տօն Տաղաւար Վերափոխման Ս. Աստուածամօր: Ս. Պատարագի Խորհուրդը կսկսի ժամը 9. 30 ին: Քարոզի ժամն 11 Նիւթն է՝ "Կրթութիւնը ընտանեաց մէջ և Հայ տունները":

Խաղաղի օրհնութիւն կրսկսի ժամ 11. 45—12: Երեկոյեան Կիրակնօրեայ դաս պիտի շաւանդուի տաղաւարի սաթիւ:

ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ա.

Ֆաղաքակրթեալ մարդ մը՝ զէթ իր օգտին համար պարտական է քիչ շատ տեղեկութիւն ունենայ իր բնական երկրի հիմնական օրէքներուն ու անոր ներքին կազմակերպութեան մասին, երբ մանաւանդ նոյն երկրին ախրող կառավարութեան ղեկը թուրքիոյ պէս քանի մը առանցնաշնորհեալ անմիտներու ձեռքին մէջ գրուած չէ, հասպա ժողովուրդը ինքն է բարձրագոյն իշխանութիւնը և իրմէ կը բղխի ինքզինքը կառավարելու ամէն օրէնք ու կանոն:

Երկրագնախա վրայ գտնուող հասարակապետական կառավարութեանց մէջ Միացեալ Նահանգներունը ամենէ ազատականն ու անմտնոր նկատուած է, և այս երկրի մէջ ապրող կամ զայն որդեգրող մտացի մարդու մը համար ներելի չէ անձանօթ մնալ անոր՝ երբ մանաւանդ օրէնքը իրաւունք տուած է իրեն հաւասար ձայն ու քուէ ունենալ անխտիր իր բնիկ քաղաքացիներուն հետ:

Երբ մէկը ըստ բուսականին չի գիտեր ներքին կազմակերպութիւնը, չի ճանչնար զէմքերն ու զէպքերը, կամ կղզիացեալ կապրի խիտ անձուկ սահմանի մը մէջ, ի հարկէ չի կրնար իր ձայնը լսելի կամ իր կամքը զգալի ընել արժանապայել կերպիւ, և բնականաբար չի կրնար վայելել այն դասակարգի յարգանքը որ իրաւունք տուած է ամէն մարդու վայելել օրէնքին պաշտպանութիւնը հաւասարապէս, հետաքրքրուիլ անով ու անոր պաշտպանն ու պահպանը ըլլալ:

Ցաւալի իրողութիւն մ' է թէ Միացեալ Նահանգաց մէջ ապրող մեր Հայրենակիցները, որոնք հազարներով կը հաշուին այսօր, շատ քիչ տեղեկութիւն ունին իրենց որդեգրած երկրի ներքին կազմակերպութեան ու օրէնքներու մասին: Ոմանք այս անտարբերութիւնը կը նկատեն Հայրենասիրութեան արդիւնք, ու գտնուած են ծայրահեղներ ալ որք Հայը այս երկրի հետ շփման մէջ գնելու կամ զայն երկրի օրէնքներուն ընտելացներու գաղափարին մէջ ազգային վտանգ մը տեսած՝ ու ջանացած են անոր միտքը գոց պահել բոլորովին ամէն լոյսի ու զարգացման դէմ. բան մը որ ինքնին զրկանք մ' է ու նախատինք Հայ հայրենասիրութեան հանդէպ: Մեր կարծեօք պէտք է որ Հայը սորուի այս ամէնը և գիտնայ թէ ինչպէս կը կառավարուի երկիր մը երբ մանաւանդ անոր ղեկը ժողովրդի արթնութեան ու կամքին յանձնուած ըլլայ:

Ինչպէս ուրիշ Հայաբնակ տեղեր նոյնպէս և հոս Հայ քաղթականութիւնը բոլորովին անձեռնմուխ և անտարբեր է իր բնական երկրին հանդէպ, աննշան բացառութիւնը յարգելով՝ նա ոչինչ գիտէ նահանգի ներքին կազմակերպութեան ու օրէնքներու մասին, անջատ, կղզիացած և անտարբեր

կապրի ամէն բանի մէջ ի վնաս իր անհատական շահուն և ի վնաս հանրութեան օգտին ու իր մտաւորական զարգացման:

Ինչպէս որ ըսած էինք մեր նախաբանին մէջ «Ֆաղաքացին» իրր տեղական Հայ թերթ մը պիտի ջանայ իր կարողութեան չափով պարզել իր ընթերցողներուն այս կարևոր կէտերը, և շարք մը յօդուածներով պիտի աշխատի արձանագրել այն ամէն կարևոր օրէնքներն ու կանոնները որք ի հարկէ կը բղխին նահանգի սահմանադրութենէն և որոց վրայ տեղեկութիւն ունենալ անհրաժեշտ է ամէն մտացի մարդու կամ քաղաքացիի համար:

Հոս հարկ է նախ ըսել թէ այս երկրին մէջ չի կայ և չի կրնար ըլլալ օրէնք մը հոգ չէ լինի Նահանգային, դաւառային կամ քաղաքային որ բղխած չի լինի ազգային սահմանադրութենէն:

Եթէ Միացեալ Նահանգաց որ և է մէկ կողմը մարդիկ այնպիսի օրէնք մը հաստատեն որ բաւի Սոցոյային սահմանադրութեան սոցոյն կամ սառնին՝ այդ օրէնքը չիկրնար զործադրելի ըլլալ կամ զօրութիւն ունենալ, վտանգի ազգային սահմանադրութիւնը բոլոր երկրի օրէնքներուն հիմն ու աղբիւրը ճանչցուած ու այնպէս վճռուած է ժողովուրդի հաճութեամբ:

Արդ տեղեկութիւններ տալով այս Նահանգի ներքին կազմակերպութեան ու օրէնքներու վրայ՝ քաղուածներ ընելով Գաւառական սահմանադրութենէն գաղափար տուած կըլլանք, ոչ միայն Ազգային Սահմանադրութեան վրայ, զոր պիտի թարգմանենք յարմար պարագային, այլ միւս Նահանգներու կառավարութեանց ներքին կազմակերպութիւնը լայն գծերով նկարագրած կըլլանք արդէն:

Յ Ր Է Ջ Ն Օ

ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ
ԳՐԱՍԵՆԵԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻՆ
ԱՅ և ՎԷՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ
ԹԷԼԷՓՈՆ — — — ՄԷՅՆ 24
ՖՐԷՋՆՕ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ.

Արաէկ Յ. Եանդեան
(ՎԱԼԻ—ՍԱՅՔԼԻԻ)
ԹԻԻ 2144 ՖՐԷՋՆՕ ԸՄԹԻԹԻ, ԹԷԼԷՖՈՆ, ՈՒԱՑԹ 747
Կը վաճառէ ՏԷՑԹՐՆ անուն համբաւաւոր հեծիւանիւր զիւրամատչելի պայմաններով:
ՄԱՍՆԱԳԷՏ Նորոգիչ ամէն տեսակ հեծերանիւի:
Դեռ ոչ մի յաճախող զեգոհ չէ մեկնած այս խանութէն: Փորձ մը պիտի համոզէ Ձեզ:
Մասնաւոր ուղարկութիւն Հայ յաճախորդաց:

ԹՐԷՅՁ ՓԷՅՓԸՐԻ ՀԱՄԱՐ

ՍԻՄԷՆԹՈՎ ՊԱՏԱԾ ԳԱՄԻ ՈՒ ՀԱՐՏՈՒԷՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱ ԱՌ

ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՑ

ԹԵԼԷՖՈՆ

ՖՐԷՋՆՕ, ՔԱԼ

ԷՔՅԷՆԶ — ԹԻՒ 2

Ս Ա ՇՈՒԱՅՁԸՐԻ

ՀԱՐՆԷՍ, ԹԱՄԲ, ՄՏՐԱԿ, ԾԱԾԿՈՑՆԵՐ, ԵԻՆ.

Ա՛հն տեսակ Նորագումներ կըլան փութով:

1920 Մարտիոյ Ըթրիթ, Ֆրէճնօ:

Ձեր Ապահովագրութեան Համար դիմեցէ՛ք առ

Պ. Ֆ. Շեփհրտ և ը ԸՆԿ.

1123 ՃԷՑ Ըթրիթ

Պահանջները փութով կը վճարուին: Յաճախորդք միշտ գոհացում կտանան:

ՉՈՐ ՊՏՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Անցեալ Շարաթ օր Էտճըրլի Հօլին մէջ տեղի ունեցաւ չոր պտուղ արտադրող երկրագործներու վերջի ընդհանուր ժողովը՝ կանխաւ տրուած որշման մը համաձայն: Ներկայից թիւը ակնկալուածէն շատ փոքր էր գարձեալ, բայց և այնպէս նիստը տեղի ունեցաւ յաջողութեամբ, յանձնախումբը իր տեղեկագիրը ներկայացուց և հետեւեալ որոշումները արուեցան, թէ՛

1. Այս ընկերութիւնը կոչուի "Ֆրէճնօ Տրայտ Ֆրութ Կրօվըրս Ասօսիէշն", ու վաւերացուի Նահանգի օրինաց ներքե: Իւրաքանչիւր անդամ մէկ բաժին միայն գնելու իրաւունք ունենայ՝ առանց զայն ուրիշի փոխադրելու իրաւունքի:

2. Ընկերութիւնը ունենայ 2000 բաժին միայն՝ Իւրաքանչիւրը 2 ու կէս սուրբի արժողութեամբ:

3. Հինգ անդամներէ բաղկացեալ մարմին մը վարէ ընկերութեան գործերը:

4. Անդամները իրենց բոլոր չոր պտուղները ընկերութեան յանձնեն ու ստանան անոր ընկալագիրը: Թերեւս աւելորդ չէ կրկնել թէ այս ընկերութեան նպատակն է իր անդամներուն չոր պտուղները վաճառել կարելի եղածին չափ բարձր գներով, և թոյլ չի տալ որ իրենց շահը միջնորդներու կողմէ գրանցի ասկէ վերջ:

Յանձնախումբը իր տեղեկագիրին մէջ ըսած էր ի մէջ այլոց թէ այսպիսի կազմակերպութեան մը ձեռնարկելը մինչև սազիման մը ապագային պիտի ըլլար

եթէ երկրագործք չի խոստանային առնուազն 500 թըն չոր պտուղ գնել անոր արամադրութեանը տակ: Սոյն կարեւոր կէտը ստուգելու համար ներկայից արտադրելիք պտուղները հաշուի առնուելով տեսնուեցաւ որ 350 թօնօ ապահովուած էր արդէն ափ մը բաղմութեան մէջ: Ներկայ եղողներէն շատեր վստահացուցին սակայն թէ իրենց զբաղմունքէ շատեր՝ որոնք ծառատաններու մէջ չափէ աւելի զբաղած ըլլալով չէին կրցած ներկայ ըլլալ թէև՝ բայց հաճութիւն ունէին իրենց պտուղները ընկերութեան յանձնել: Այս ապահովութեան վրայ որոշուեցաւ մտայ միջոցաւ կոչ ընել փափաքողներուն ու խնդրել որ փութան կարելի եղածին չափ շուտով ստորագրել այս մասին կանխաւ պատրաստուած խոստմնագիրը՝ ընկերութիւնը հաստատ հիման մը վրայ գնելու համար:

Այս խոստմնագիրը հրատարակուած է տեղական թերթերուն մէջ: Փափաքողներն կրնան զայն կարել ու ստորագրելով յղել ընկերութեան հասցէին Փ. Օ. Պաքս 1222:

Տարակոյս չի կայ այժմ թէ այս ընկերութիւնը 500 թօնայէ աւելի պտուղ պիտի ունենայ իր արտադրութեանը տակ, և փափաքելի էր որ Հայ երկրագործք ևս անփոյթ չի գտնուէին այս մասին:

ՃՕՐՃ ՊՐԱՏԸՐՍ

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏՆՍԱԿ ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՁԱԿՆԵՐ.

1109 ՃԷՑ Փողոց, —Ֆիւք Պաքս— Ֆրէճնօ. ԹԵԼԷՖՈՆ — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արդէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բաղդատաբար՝ ուրիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահացնէք դուք զձեզ այս կարեւոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է ռասանալ ՃՕՐՃ ԵՂՔԱՑՐՆԵՐԷՆ:

ՄԻՂՐԱՆ Գ. ՍԷՐԱՅԼԵԱՆ

Գ Ծ Ա Գ Ր Ի Զ

819 Մարքէթ Ըթրիթ, Սան Ֆրանսիսկօ, Քալ.

Իւզաներկ, ջրաներկ, Փասթէլ ևն. նկարներ Քալիֆորնիոյ մէջ մեր ունեցած բազմաթիւ բարեկամներն ու յաճախորդներն պէտք չունին գովեստներ լսել մեր գործերուն համար, որոնք իրենք իրենց համար կը խօսին արդէն: Ուստի ծանուցանել հասարակութեան մեր հասցէն բաւական կը սեպենք:

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033

ՃէՅ Փողոց, Էքսփրոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի համար

Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Սենթ

Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Տրանց — — Վեցամսեայ 5 Տրանց

Քաժանորդագիրը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ զրամ կը զրկուին Խմբագրութեան հետեւեայ հասցէիւ՝

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of California.

H. EQUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՉՆՕ, ԲԱԼԻՖՕՐԵՒՄ. ՕԳՈՍՏՈՍ 30, 1902

ՏԱՄՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԳ ԴԱՐԸ

Ս.

Ներկայ քաղաքակրթեայ ազգաց համար չի կայ բան մը թերևս այնչափ զժուարին որչափ է հասկընալ մարդկային կացութեան այն զարմանլի փոփոխութիւնը որ տեղի ունեցաւ վերջի հարիւր տարիներուն մէջ: Այսօրուան հասարակ գործաւորը՝ շատ մը տեսակէտներէ նայելով լուսագոյն պարագաներու տակ կապրի քան թագաւորներն ու իշխանները 18րդ դարու մէջ: Նախորէն, իր փառքի ամենաբարձր կէտին վրայ եղած ատեն անգամ չըջապատուած չէր այն զիւրութիւններով որոնք այսօր հասարակ դարձած են ամեն զասակարգի մարդոց համար: Տրանսայի հոշակաւոր աշխարհակալը թերևս մտքէն իսկ չէր կրնար անցունել երկաթուղին, ելեքտրական լոյսն ու զօրութիւնը, շոգենաւը, հեռագիրը, հեռաձայնը, Ֆոնօկրաֆը արդի լրագրութիւնը և ուրիշ հազարաւոր նորանոր գիւտեր որոնք այսօր հասարակ գործաւորի մը կեանքը կը զիւրացնեն:

Այսօրուան հասարակ մահկանացուն բազմատեղով հին թագաւորին հետ, շատ մը տեսակետներէ նայելով աւելի լաւ կապրի, ու շատ աւելի զօրաւոր միջոցներով պաշտպանուած է համաճարակ հիւանդութեանց ու մահու առջև: Արդի մարդը բնութեան խորին գաղտ-

նիքներուն աւելի թափանցած է 1800ի թագաւորին հետ բազդատելով: Նա գիտէ այնպիսի ճշմարտութիւններ որոնք վերջնայն կեանքի մէջ երազներ իսկ չէին կրնար ըլլալ:

Վերջի դարը մարդկային զօրութեան կազմակերպուելու դարը եղաւ: Շոգեշարժ մեքենան՝ որ խաղալիքէ մը քիչ աւելի նշանակութիւն ունէր, գործնական տեղ մը բռնեց մեր առօրեայ կեանքին մէջ. յեղափոխեց բոլոր արհեստները, զիւրացուց ճամբորդութիւնը, միջոցը պզտիկացուց և անհատի մը ձեռքին մէջ 100,000 և աւելի ձիւրու զօրութիւնը սանձի մը տակ զրաւ անոր կամքէն ու հանութենէն կախեալ:

Հարիւր տարի առաջ ջուրերուն վրայ ճամբորդող նահապետական նաւը, որուն հագիւ կարելի էր շոգեշարժ անուըր տալ, տեղի տուաւ այսօրուան հսկայական շոգենաւերուն որոնք շարժուն քաղաքներ են՝ պալատներով զարդարուած:

Շոգեկառքը իր նախնական վիճակէն հսկայական կառախումբը յառաջ բերաւ որուն մէջ մարդու միտքը անթիւ գիւրութիւններ սահմանած է ճամբորդներու հանգստութեան համար:

Երկրագործին աշխատութիւնը այնչափ զիւրացաւ այս հարիւր տարիներուն մէջ՝ որչափ զիւրացած չէր Նոյի օրէն իսկեր:

Այն գործիքները որոնք ջրհեղեղէն յետոյ Հայաստանի մէջ գործածուի սկսեցին և որոնց նմանները Հայաստանցի երկրագործին անբաժան ընկերներն են տակաւին, անյուսալի փոփոխութիւններ կրեցին: Հին հնձանի փոխարէն նոր քաղաղ մեքենան հնարուեցաւ: Հին ցանող երկրագործին աշխատութիւնը այսօրուան գործիքը այնչափ զիւրութեամբ կը կատարէ որ մէկ մարդ հարիւրէ աւելի աշխատաւորներու գործը կըրնայ ընել շատ աւելի թիթեւ աշխատութեամբ:

Ոստայնանկի գործին ու նահապետական ճախարակը, որոնք հագիւ հաստ ու տղեղ կաւաւ մը կարտադրէին, տեղի տուին արդի հրաշալի գործիքներուն որոնց հիւսուածները կարծել կուտան անկարժ աշփերու թէ գծապրչի մը ճարտար վրձինով նկարներ գծուած են հոն:

Տասնեկններորդ դարուն մէջ տպագրութիւնը մեքենական փորագրութեան հետ այնպիսի հսկայ քայլ մ'առաւ որուն նմանը թերևս առնուած չէր ուրիշ ո և է ճիւղի մէջ, և որուն ուղղակի ազդեցութիւնը մարդոց զարգացման վրայ այնչափ մեծ է և ակներև որ կասկածի և վիճարանութեան նիւթ չի կրնար ըլլալ երբէք: Այսօրուան օրաթերթը կամ պատկերազարդ մէկ հանդէսը, զոր ունինք մեր սեղաններու վրայ ամէն օր, Նախորէնի օրով այնչափ մեծ անկարելիութիւններ էին որքան անկարելիութիւն մ'է այսօր ճամբորդութիւն մը ընել զէպի Ղուսին կամ Հրատ: Եթէ՛ հին ու նոր տպագրութիւնը բազդատելու ելնենք անոնց տարբերութիւնը այնչափ մեծ պիտի գըտնենք որչափ մեծ է արդի ելեքտրային լոյսին ու նահապետական խղի տղեղ կանթեղներուն մէջ:

Հարիւր տարի առաջ Սմերիկեան մեծ օրաթերթերէ

մէկին մէկ թիւը միայն ի լոյս ընծայելու համար հարիւր գրաշար մէկ երկու օր զայն շարելու էին անընդհատ, առանց հաշուի առնելու սրբագրութիւններն ու տպագրութիւն վերջ տառերը ցրուելու դժուարութիւնը: Քանի մը հարիւր մամուլներ գիշեր ցորեկ գործելով շարունակ՝ մէկ շարաթի մէջ հազիւ պիտի կարողանային տպագրութիւնը ի գլուխ հանել: Այդ թերթերը ծալելու և թղթատարին յանձնելու համար գործաւորներու բանակմը աշխատելու էր օրերով իսկ զայն իրենց տէրերուն հասցնելու միջոցը գտնուելու ալ ըլլար՝ ամիսներու զուցէ տարիներու ճամբորդութեան պէտքը պիտի զգացուէր անշուշտ:

Այսպիսի թերթի մը սուսած օրական լուրերը միայն հաւաքելը բանարձակապէս անկարելի էր զար մը առաջ: Աւերիկէի խորերէն, աշխարհիս ամենահեռաւոր անկիւններէն լուր բերելը եթէ այդ օրերուն համար կարելիութեան սահմանին մէջ ալ զնելու ըլլանք, խոստովանելու ենք սակայն թէ տարիներու տաժանելի ճամբորդութեան պէտք պիտի ըլլար աշխարհի մէկ անկիւնէն հինցած և օթեկ կտոր մը լուր բերելու ճամբար:

Բայց այսօր ՉԿ ժամի մէջ այս ամէնը կը կատարուի մեքենական ճշգրութեամբ: Գրածոյ մեքենան, կարի հասարակ մեքենայէն քիչ մը մեծ գործիք մը, կրակի արագութեամբ կը շարէ գրերը առանց գրաշարի մը սովորական սխալները գործելու:

Մէկ աշխատաւոր գրածոյ գործիով մը 10-15 գրաշարի գործը կը տեսնէ այսօր և այդ ալ խիստ մեծ հեշտութեամբ: Մամուլը, մէկ հսկայ գործիք մը միայն՝ քանի մը վարպետ վարիչներու հսկողութեան ներքեւ մէկ ժամի մէջ 100,000 օրինակ 36 երեսնոց թերթ կը տպէ, կը ծալէ, ու կը համրէ ամենայն ճշգրութեամբ: Այդ հրաշալի գործիքը տեսնող մէկը չի կրնար չի խորհիլ թէ անոր մէջ մարդիկ յաջողած են խելք, միտք և ուղեղ ալ զնել:

Սակայն մեր ընթերցողները մտնալու չեն սակետը թէ Հայ լրագրութիւնը զարգացման այս սուպարէզին մէջ ոտք անգամ չէ կրցած զնել տակաւին. մեր թերթերը՝ առանց ու և է բացառութեան դեռ կը շարունակեն կուսակալի հնարած եղանակաւ: Մեր դժբաղդ գրաշարը մինչև հիմա հազարաւոր տառերը իրարու քով կը դնէ մէկիկ մէկիկ գրութիւն մը շարելու համար: Սրամաշուկ գործ:

Սակայն եթէ չենք կրցած մեր թերթերը մեքենայով շարել, արագատիպ մամուլներու վրայ միջոններ տպել անկէ կարճ ժամանակի մէջ, եթէ չենք կրնար առանձին հեռագրի թելեր ունենալ՝ աշխարհի ամեն կողմերէն լուրերը հեռագրելու համար, բայց Հայ մամուլը կրցած է օգտուել այս ընդհանուր զարգացումէն շատ մը ձեւերու մէջ գրա թուելը աւելորդ կը նկատենք՝ այս յոգսած ի նպատակէն գուրս եղած ըլլալուն համար:

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—0—

—Նկարագրի տէր մարդը իր լեզուն սուրի նման չի սրեր ուրիշի մը համբաւը աղարտելու համար:

—Նահելու համար գլուխ ունենալու է, ծախսելու համար՝ սիրտ:

—Կօլտամիթ գինին կը սահմանէ այսպէս. "գի նին փիլիսոփայ մ'է որ մեր ցաւերը կը վանէ, ու անհասոյ յիշատակներ մոռցնել կուտայ":

—Ճշմարտութեան յաղթանակը ամէն ուրիշ յաղթութիւններէ մեծ է և հրաշափառ, վասնզի ոչ միայն արիւն չունի իրեն հետ՝ այլ տեսական է յաւիտեան:

—Կեղծ բարեկամները կը նմանին մեր ստուերին սրունք՝ երբ պայծառ արեւին մէջ քաղենք մեր մօտէն կուզան միշտ, բայց երբ շաքին մէջը մըսնենք՝ կանհետանան իսկոյն:

* * * * *

Կենաց ճամբան մութ է, լեցուն է փուշերով, Սիրոյ լոյսը սակայն ցերեկն ու գիշերով, խաւարը կը վանէ՝ ճամբորդին կուտայ յոյս, Փուշի տեղ ցանէ վարդ, խաւարին տեղ ալ լոյս:

* * * * *

—Կըսին թէ մօտեղ մը 400 ձագ կը հանէ տարուան մը մէջ. գարմանալի չէ:

—Այո, գարմանալի է, և բնաւ չեմ մեղադրեր խեղճ միջատը:

—Ի՞նչու:

—Վասնզի բնական է որ այդչափ մեծ ընտանիքի մը հայրը վայրագ ու յուսահատ ըլլայ իր կեանքին մէջ:

Ա.—Ի՞նչ. հաւաքչութեան պաշտօնը՝ որ այնչափ դժուարութեամբ ձեռք բերի քեզ համար կարապետեանի քով, չուզեցի՞ր շարունակել. այդ ի՞նչ խելք:

—Ուրիշ ի՞նչ կրնայի ընել անոնք՝ որոնցմէ պահանջ գանձելու կը զրկուէի, գրեթէ ամէնն ալ իմ վրայ պահանջ ունեցող մարդիկներ էին:

Փաստաբան — Վկան թող ըսէ թէ ձերբակալեալը մինակ եղած առին սովորութիւն չունի՞ սուգելու:

Վկան — Ներեցէք, ձերբակալեալը մինակ եղած ժամանակ ես հեռը գտնուած չեմ երբէք:

Փաստաբան — Չեմ կարծեր թէ կրնաս կնիկէդ բամբուկ չունին այլևայլ տարկաներ նետելուն համար:

Խնդրարկուն — Բայց, պ. փաստաբան, ամէն անգամ շունին նետած բանը իմ գլխիս դպած է:

—Հայրիկ, անցեալ օր ինձի չըսի՞ր թէ շխտակ չէ որ մէկը իրմէ պղտիկին գարնէ:

—Այո, տղաս, մեծ յանցանք է այդ:

—Ուրիշն կը խնդրեմ որ այդ մասին նամակ մը գրես վարժուհոյս. չեմ կարծեր թէ անիկա բան մը գիտէ այդ մասին:

Լրաքաղը — Գուք շատ երկար տարիներ ապրած էք. կը խնդրեմ ինձ ըսէք թէ որն է եղած ձեր կենաց ամենէ երջանիկ րոպէն:

Ծերը — Այդ րոպէն եկած չէ տակաւին:

Լր.— Ո՞չ տակաւին: Երբ պիտի գայ ուրեմն:

Ծե.— Երբոր մարդիկ զաղբին խենթուկ հարցումներ ընելէ:

ՖՐԷՉՆՈՒ ՀԱՅ ԿԱՂՈՒԱԾԱՏԵՐԵՐԸ

Ազգային Հոգաբարձութիւնը՝ Ֆրէզնոյի Հայոց թիւը ստուգելու համար անցեալները մարդահամարի մը սկսեց՝ յատկապէս սուրբազան թուղթեր բաժնելով այն ամեն անձանց որք գիւրութիւն ունէին իրենց քաղաքացիներու կամ գիւղացիներու անուններն ու մականուններն արձանագրել անոնց վրայ ու յանձնել զայնս Հոգաբարձութեան՝ զաստուորուելու և մէկ տօմարի մը մէջ արձանագրուելու համար: Թերևս աւելորդ է ըսել թէ իսկապէս օգտակար ձեռնարկ մ' է այս՝ ամեն անհատի օգնութեան ու գնահատութեան արժանի, որ կը յուսանք թէ պիտի կրնայ յաջողութեամբ ի գլուխ ելլել քիչ ժամանակի մէջ:

Հոգաբարձութեան այս օգտակար ձեռնարկէն նուազ կարեւոր չէ սակայն պատրաստել Ֆրէզնոյի Հայ կալուածատէրերու ցանկը՝ զիսնալու թէ որչափ է մեր գաղթականութեան իրական զօրութիւնը այս քաղաքիս մէջ:

Սոյն պէտքը լեցնելու համար խմբագրութիւնս՝ քանի մը ազգայիններու օգնութեամբ՝ սկսած է այսպիսի ցանկ մը պատրաստել զոր կը յուսայ ամբողջացնել քանի մը շաբաթէն:

Այսօր կը հրատարակենք այդ ցանկին մէկ մասը՝ անոր շարունակութիւնը հետզհետէ հրատարակելու յոյսով. եւ այս առթիւ կը խնդրենք ամէն ազգայիններէ օգնել մեզ այս մասին:

1. Կարապետ Պըլըզեան Արտավար այգի	20
2. Կ. ձիհանչահեան " "	20
3. Իմիրզեան Եղբարք այգի և ծառաստան	110
4. Կիրակոս Յովհաննէսեան արտավար այգի	40
5. Ներսէս Յովհաննէսեան " "	20
6. Յ. Պարսամեան " "	40
7. Յարթ Նշիկեան " Յորենի հող	160
8. Յակոբ Ռատիկեան " Այգի	40
9. Պողոս Ազատեան " "	40
10. Ե. Քէչեպաշեան " "	40
11. Տբթ. Թիւֆէնկճեան " "	20
12. Աւետիս Թիւֆէնկճեան " "	40
13. Հ. Էկինեան " "	30
14. Կարապետ Գառգարեան " "	30
15. Յարութիւն Ռատիկեան " "	20
16. Գ. Սողիկեան " "	20
17. Մանուկ Աճէմեան " "	40
18. " " Յորենի երկիր	60
19. Պ. Տէրտէրեան Արտավար Այգի	20
20. Մ. Տէրտէրեան " "	20
21. Փօլ Մովսէսեան և Մ. Շահպաղեան նոր անկուած այգի	160
22. Պատ. Ֆիլեանե Ընկ. այգի և ցորենի երկիր	160
23. Յակոբ Նշիկեան Արտավար Այգի	80
24. " " " "	5
25. Կարապետ Նշիկեան " "	40
26. " " " "	20
27. Մկրտիչ Նշիկեան " "	20

28. Գառնիկ Նշիկեան " "	20
29. Սրապիոն Մելքոնեան " "	40
30. Գ. Յովսէփեան և Պ. Տայիթեան " "	80

(Շարունակելի)

ՕԳՆԱԿՈՒՇԱԿԻ ՄԸ ԿԱՐԾԻՔԸ

Ուրիշըմ Հօրթ անուն մէկը, որ իբր օղազուչակ բուսական համբու հանած է այս կողմերը և որուն զուշակութիւնները շատ անգամ իրականութիւն գըտած են, վերջերս յառաջիկայ չօրս ամսուան օրերու զուշակութիւնը ըրաւ, որուն շատեր մեծ կարեւորութիւն կուտան՝ մանաւանդ տարուան այս եղանակներուն՝ երբ այգեպործին համար մահու և կենաց խնդիր է գիտնալ թէ, երբ անձրև կակնկալուի մանաւանդ Սեպտեմբերի մէջ: Ի ստորև կը հրատարակենք յառաջիկայ երկու ամսուան զուշակութիւնները ու մեր այգեպաններուն կը թողունք հաւատ ընծայել անոնց կամ ոչ:

Սեպտ 1-14 պարզ. 15-16 հուանականարամ տարափ. 17-26 պարզ. 27-29 անձրև, 30 պարզ:
Հոկտ. 1-11 պարզ. 12-14 անձրև. 15-18 պարզ. 19-20 տարափ. 21-23 պարզ. 23-24 անձրև. 25-27 պարզ 28-30 անձրև. 31 պարզ:

Տրք. Յ. Ղազարեան,

ԱՏԱՄՆԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ Զանա Պլաք, ԱՅ Ըթրիթ, Ֆրէզնօ, Գալ. Գոհացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գոհացում Յաճախորդներուն: Գրները միշտ չափաւոր: Թէլէֆօն — — — — Ուայթ 231

Լ Ա Ի Ա Գ Ո Յ Ն Գ Ա Ր Ե Զ Ո Ւ Ր Ը

ՖՐԷՉՆՈՅԻՆՆ Է

** ՓՈՐՁԵՑԷՔ ԶԱՅՆ ԵՒ ՀԱՄՈՉՈՒԵՑԷՔ: **

ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ

ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ

Տօրսիյ Բապիւնարև Ընկ.

Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը

ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Ամենաբարձր գին կը վճարեն Թ Ո Ւ Զ Ի , Գ Ե Ղ Զ Ի Ո Ւ Ա Մ Ե Ն Տ Ե Ս Ա Կ Զ Ո Ր Պ Տ Ո Ւ Ղ Ն Ե Ր Ո Ւ :

ԻՄ ԳՐԻՉԸ

—o—

Աշխարհ ինձի բարեկամ էր
Երբ քսակս կար դրամ
Մեծ ու պզտիկ, հարուստ աղքատ
Անկեղծ էին բարեկամ:

Ճամբուս վրայ բերաւորներ
Կողմունէին զիս սիրով,
Մեռնիլ անգամ ինձի համար
Խօսք կուտային երդումով:

Ինձի նման առաքիլնի
Մէկը չէին զեռ տեսեր
Աշխարհի մէջ չէին տեսած
Ինձ հաւատար ազգասէր:

Իմ խօսքերս մարդոց համար
Պատգամ էին սրբազան,
Կը հաւատային թէ կեանքի մէջ
Քաջ զիտէի ամեն բան:

Իմ անունս երբոր լսուէր՝
Չայն իմ անթիւ չողքորթի
Բարեկամներ կողմունէին
Կեցցէներով մեծազորով:

Բայց երբ բազըլ երես դարձուց՝
Հարսաւթիւն ու դրամ
Կորսնցուցի ամեն առիթ,
Թէեւ շատ կար բարեկամ

Կը յուսայի թէ համակիր
Բարեկամներս ինձ կըլլան
Դժբաղատութեան օրերուս մէջ
Թեւ ու թիկունք օգնական:

Բարեկամաց իմ այդ բանակ
Կարծես բազըլս դաշնակից
Ինէ երես դարձուցին շուտ
Այդ անկեղծներ սրտակից,

Բայց այդ դժբաղդ օրերու մէջ
Իմ ցաւերուս լոկ մեղմիչ
Դու մնացիր ընկեր անկեղծ
Ո՛վ չտխախտեալ իմ գրիչ:

Դու երգեցիր իմ ցաւերս
Դու եղար ինձ միւթնար
Երբ իմ սիրտս կալէկոծեր
Չայն առիւթ ինձ յոյս արդար:

Սիրեմ գրեց, ո՛վ գրիչ իմ՝
Հաւատարիմ անվեհեր,
Իմ ցաւերուս դու ցաւակից,
Ուրախութեանց իմ՝ ընկեր:

Լաց ինձի հետ երբ ես կուլամ,
Երբ ծիծաղիմ՝ ժպտէ դու,
Դու իմն եղիր, ես քեզ գերի՝
Մէկտեղ ապրինք ես ու դու:

Քեզ իմ կուրսած սրտիս սեղմեմ
Պաշտեմ հոգւով համբուրեմ,
Քու միջոցաւ հոգիս խօսի,
Սիրտս ու միտքս քեզ գրեմ:

Ես քեզմէ զատ չունիմ երբէք
Սէր մը անկեղծ մտերիմ,
Կեղծ բարեկամ չողքորթին
Ան պիտ' չըսէմ "ընկեր իմ":

Հ. Է.

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

—0—

Քալիֆօրնիոյ Նահանգային համալսարանի կողմէ հրատարակուած յայտարարութիւն մը կը ծանուցանէ թէ յառաջիկայ Հոկտեմբեր 7էն սկսեալ մինչև Վեկա. 15 նոյն Համալսարանի երկրագործական բաժնին մէջ ձրի դասախօսութիւններ պիտի ըլլան նահանգին այն ամէն երկրագործներուն որք փափաք ունին գործնական դասեր առնել զանազան ճիւղերու վրայ: Տասն և եօթը տարեկանէ վեր եղող ամէն երկրագործ իրաւունք ունի օգտուիլ այս պատեհութենէ՝ պայմանաւ որ դասերը հասկնալու չափ ծանօթ ըլլայ տեղական լեզուին: Փրօֆէսոր Հելկերտ՝ երկրագործական ճիւղի Տեոռը՝ պիտի դասախօսէ Քալիֆօրնիոյ հողերը ինչպէս մշակելու, զանոնք ինչպէս դասաւորելու և ընարութիւններ ընելու մասին: Փրօֆէսոր Ուիլբըն առնակելու և կանանչներու ինչպէս աճիլը պիտի սուսուցանէ, պիտի դասախօսէ նաև սարքեր գաւառներու տարբեր հողերը ինչպէս մշակելու մասին: Փրօֆ. Շօ ճակնոկեզ ևն. հասցնելու կերպը նաև սարքեր հողերը ինչ կերպով հարստացնելու և զօրացնելու միջոցները պիտի ունենայ իր դասախօսութեանց նիւթ: Գասեր պիտի սուսուցուին կարող սուսուցիչներու կողմէ պատուներու և սուսուցիչու մնասող զանազան միջատներն ու կենդանիները ճանչնալու, զանոնք ո՞նչպէս կը ինչպէս նաև սուսուցիչը ևն. պաշտպանելու եղանակներուն վրայ: Կենդանիները ինչպէս ինամելու, զանոնք շահաբեր ընելու, անոնց հիւանդութիւնները ճանչնալու և դարմանելու եղանակներն և ուրիշ շատ մը ճիւղեր յանձնուած են սարքեր սարքեր դասախօսներու: Հայ երկրագործներէ շատեր, եթէ ոչ ամենը, պէտք ունին այս պատեհութենէ օգտուիլ, և փափաքելի էր որ օգտուէին անկէ:

—Այգիներու մէջէն Ֆիլօքսերան ջնջելու համար նոր փորձ մը եղած է Գերմանիոյ Ֆրանքֆորթ քաղաքին մօտերը, ու գոհացուցիչ արդիւնք առած է: Նոյն քաղաքի Ամերիկեան Հիւպատոսը յատուկ տեղեկագրով մը հետեւեալը կը պատմէ այս մասին: Ճ. Ֆուչ անուն այգեպան մը իր չորս տարի առաջ տնկած մէկ այգիին բոլոր որթերուն գլխաւոր արմատները երեքտրական թելերով հաղորդակցութեան կը դնէ իրարու հետ, ու երբեմն երբեմն երեքտրական հոսանք մը կը յղէ այդ թելերուն մէջէն: Այգին որ Ֆիլօքսէրայով լեցուն է եղած, հիմայ ոչ միայն աղատ է այդ աւերիչ միջատէն, այլ և սկսած է սուղի առատ ու ընտիր բերք տալ, մինչդեռ առոր կիցը եղող ուրիշ այգի մը որ մի և նոյն ժամանակ տնկուած էր, ոչ միայն ողողուած է Ֆիլօքսէրայով այլ և բերքը տարուէ տարի նուազելու վրայ է այժմ:

Թերեւս պիտի դայ օր մը երբ մեր այգիներն ալ կը բերտրական թելերով պիտի կապենք իրարու՝ եթէ երևան եկած Ֆիլօքսերան աճիլ ու տարածուի սկսի:

Թ Ր Է Յ Ն Ե Ր

100,000 Սև թուղթի թրէյզ կը ծախուին Վարձու առնելէ շատ աժան գներով: Օրինակը տեսնելու կամ գնի համար գիմել Առ ձՕՆ ԿՐՈՒՄԷԹԻ,
Մատիսըն և Պանըրիմիջոցաւ 1144 ձէյ Ըսթրիթ.

ՉԱՄԻՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—0—

Հակառակ այգեպաններու անհամբեր սպասելուն՝ Չամիչի Ընկերութեան Վարիչները զեռ ոչինչ ըսին իրենց ընելիք կարգադրութեան մասին: Ամեն ինչ գաղտնի կը պահուի Ընկերութեան ապագայ յաջողութիւնը ապահով ընելու նպատակաւ: Թէև Վարիչներէն ու վաճառականներէ դուրս ոչ ոք բան մը գիտէ անցած դարձածին վրայ, բայց սա անկասկածելի իրողութիւն մէջ թէ Ընկերութիւնը պիտի ապրի անտարակոյս սրուն անհրաժեշտ պէտքը զգալի է մանաւանդ այս տարի՝ երբ բերքերը չափազանց առատ են: Առանց ընկերութեան ոչ ոք կը յուսայ 2-3 սէնթէն աւելի ծախել շամիչին փաւնար, մինչդեռ ընկերութեան գոյութիւնը պիտի կրնայ 4 էն 5 սէնթի բարձրացնել այդ գիները:

Ընկերութեան Վարիչներու կողմէն կըսուի սակայն թէ յառաջիկայ շաբթու մէջ պիտի կրնան վերջնական լուր մը տալ իրենց բրտած կամ ընելիք կարգադրութեան մասին:

Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

—0—

ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏԱԿԱՆՍ ԺՈՂՈՎՆԵՐԸ

—0—

Գաւառիս Հասարակապետականաց ներկայացուցիչներու Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ անցեալ շաբթու՝ Հինգշաբթի օր Քրթնըր Հօլի մէջ Հասարակապետականաց ընտրելիներու ցանկը պատրաստելու համար: Ներկայ էին 247 ներկայացուցիչներ: Ժողովը բացաւ Գասաուր Բոթանթն Լ. Քարթըր՝ կեդրոնական յանձնախմբի տաննապետը, օրուան ու պարագային յարմար ստանախօսութիւնով մը, յորում տեղեկութիւն տուաւ յանձնախմբի գործունէութեանց մասին, մատնանիչ ըրաւ կուսակցութեան ստացած զօրութիւնը այս Նահանգիս մէջ, ու կոչում ըրաւ բոլոր Հասարակապետականաց միութեամբ գործել՝ կուսակցութիւնը յաջող վիճակի մէջ պահելու համար:

Այս ստանախօսութենէ վերջ նախադաշի ընտրութիւն կատարուելով Մ. Հ. Մ. Տրիւ ընտրուեցաւ այդ կարեւոր պաշտօնին ու Ո. Բ. Ուրիլըմ՝ ստանաղպիր: Օրակարգի, որոշմանց և յանձնարարականաց յանձնախումբեր կարգուելէ վերջ ժողովը ցրուեցաւ կէսօրէն յետոյ նորէն գումարուելու հասկացողութեամբ:

Երկրորդ նիստին՝ ժողովը յանձնախմբաց տեղեկագրութիւնները ստանալէ յետոյ ընտրելիները որոշելու ձեռնարկից և հետեւեալներն ընտրուեցան մեծամանութեան ձայնիւ:

Նահանգային Կերակոյտի անդամ—Տրթ. Չէսթըր Բավլ. Շէրիֆ — Ջ. Ո. Կիրհարա. Քալթթի Քլըք — Ո. Ս. Աքաթ. Օտթըր — Հ. Է. Պարնըմ. Բիքօրալըր — Բ. Ն. Պարթօ. Թաքս Քօլլէթթըր — Ա. Կրիլի, Ընդհանուր Գասալաղ — Ճօրձ. Ո. Ճօնս.

Աստուրըր — Ճ. Բ. Անտրուո. Գանձապետ — Ս. Ո. Մարչըլ. Կորոցներու Տեսուչ — Ո. Ն. Հարիս. Քօրօնըր — Տրթ. Ո. Թ. Պէրք. Սըրուէյըր — Ըքաթ Մըք Քէյ. Խաղաղարար Գասաուր Ճ. Ճանալն Բիս:

Այս ընտրութիւններն ըլլալէ յետոյ Ժողովը Գաւառական բաժանմանց համաձայն՝ անկատ ժողովուրդու բաժնուեցաւ՝ Նահանգային Ընդհանուր Ժողովի ներկայացուցիչներու, Գաւառական Գասաուրներու և ուրիշ քանի մը երկրորդական պաշտօնէից ընտրելիաց ցանկ մը պատրաստելու նպատակաւ:

Կէս գիշեր էր երբ ժողովը իր գործը լրացնելէ վերջ փակուեցաւ ու ներկայացուցիչք մեկնեցան սա փաստաթեմար թէ իրենց անուանած ընտրելիները Նոյեմբեր 4ին յաղթող պիտի հանդիսանային Ընդհանուր ընտրութեան փամանակ:

—Քալիֆօրնիոյ Հանրապետականաց Նահանգային ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Սաքրամենթոյի մէջ Նահանգային պաշտօնէից համար ընտրելիներ որոշելու: Ժողովը տեղեց երեք օր ու շատ փոթորկալից եղաւ: Հակակէյճեանները յաղթող հանդիսացան, ու բոլոր ընտրելիները գրէթէ իրենց մէջէն ընտրեցին:

Ահաւասիկ ընտրելիներու ցանկը: Նահանգապետ — Ճ. Ս. Փարաի, Տեղակալ—Նահանգապետ — Վ. Հ. Պեթթի: Գերագոյն Գատարանի գատարներ — Լէօօն Դօ և Ֆ. Մ. Անձէլթի: Նահանգային Գիւմանաղպիր — Մ. Ֆ. Քըրրի: Քօմիթթօրըր — Է. Փ. Քօլլէն: Գանձապետ — Ի. Թ. Բիլիս: Ընդհանուր Փաստաբան — Ի. Ս. Ուէպ: Ընդհ. քննիչ — Վիքթօր Հ. Վուա: Հասարակաց Կրթութեան տեսուչ — Թ. Ճ. Քըրք: Կառավարական սպագրիչ — Ո. Ո. Դանըն: Գերագոյն գատարանի տաննաղպիր — Ֆ. Ս. Ճօրսն:

ՍԸԹՐԸՆ ՓԸՍԻՖԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը ունի, կամ եթէ կը փափաքիս թուրքիա կամ այլուր երթալ, թիքէթի համար դիմէ ՍԸԹՐԸՆ ՓԸՍԻՖԻՔ ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ու եւ մէկ կէտին համար տոմս կը վաճառէ միւնտոյն ընկերութիւնը: Աւելի տեղեկութեանց համար դիմիլ առ:

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՍՆՀԱՆ
Տիփթըն Փասինճըր Էյճընթ: Սիթի Թիքէթ Էյճընթ
Քաղաքի գրասենեակը—Թիւ 1043 ՃԷՅ Փօղոց,
Նոր Փոթըրըն Պլաքին սոջե

ՃԻՆԹՐՈԹ - ՊՐՏՏՐՈ ԸՆԿԱՆՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ
Մեծաքանակ վաճառականք Նափայի, Սընօմայի ևն. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ
Բիւմաթիզմի ապահով դեղ ճանչցուած ՈՒԻԹՐԸՆԻ ՍԷՏԻՍԻՆԼ Լուրերուն: —Թէէֆօն, Ուայթ 847:—

ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ ԿՈՒՉՆԵՔ

Ամեն Հայաբնակ քաղաքի մէջ Դարաթաթերթն ստարածելու համար: Պայմանները շատ նպաստուող են: Գրել խմբագրութեանս հասցէին: